


Համարի հովանավոր՝
Նեկտար Սիմոնի (Ավդալյան)

Երեգան




8

(191)
Օգոստոս, 2022



ԳԵՂԵՑԻԿ ՄԻ ԳՅՈՒՏ...

Զ. Խալափյան, Արա Գեղեցիկ և Շամիրամ



Օգոստոսի 1-ին՝ Ձորայր Խալափյանի ծննդյան օրը, Երևանի մենեջմենթի համալսարանի Գյուլարու մասնաճյուղում Ձորայր Խալափյանի անվան լսարանում, տեղի ունեցավ գրողի «Մեռնող հառնող» գրքի նոր հրատարակության շնորհանդեսը: Գիրքը ներառում է հեղինակի «Մեռնող հառնող» և «Արա Գեղեցիկ և Շամիրամ» ստեղծագործությունները: Վերջերս լսարանը համալրվել է նաև Զ. Խալափյանի անձնական գրադարանով, պահպանված անտիպ նյութերով, որոնց մի մասը միջոցառման սկզբում հանձնվեց գրողի եղբորը, քանի որ նա է զբաղվում հեղինակի ձեռագրերի վերծանման աշխատանքներով: Ներկաները նախ դիտեցին ֆիլմ-էսսե, որը նկարահանվել էր գրողի 50-ամյակի կապակցությամբ, սակայն հանդիսատեսին մինչև օրս մնացել էր անհայտ, ապա գրողի եղբայրը նկարիչ, գրող Թեմիկ Խալափյանը, ներկայացրեց մանրամասներ՝ ֆիլմի մասին, հուշեր պատմեց եղբորից: Գլխավոր բանախոսը բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարինե Մարտիրոսյանը, ներկայացրեց հեղինակի «Արա Գեղեցիկ և Շամիրամ» վեպը: Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը սիրով կիսեց իր հուշերի պատահիկները հանդիսատեսի հետ, ընդգրկում էլույթով հանդես եկավ շուշեցի բանաստեղծ Ռոբերտ Եսայանը: Հանդիպման գեղարվեստական մասը ապահովեցին բուհի ուսանողուհիները, շիրակյան արվեստի նոր սերնդի ներկայացուցիչներ՝ երգիչներ և երաժիշտներ:

Միջոցառմանը ներկա էին գրողի քույրերը և եղբայրը: Ավարտին ամփոփիչ խոսքով հանդես եկավ գրողի քույրը՝ Երևանի մենեջմենթի համալսարանի ռեկտոր Միլետա Խալափյանը:

«Ինչո՞ւ հայ ժողովուրդը Շամիրամին սիրեց այնքան, որ իր առասպելներում պահեց նրան հազարամյակներ, հավերժացնելով նրա անունը շատ տեղանուններում, գործրինակ՝ Շամիրամի գյուղ, որ կանգուն է մինչև այսօր, Շամիրամի լեռնագագաթ, որ Արա լեռան հարևանության մեջ է, անգամ մինչև օրս գործող Մենուա արքայի հազարամյա ջրանցքը վերանվանվեց Շամիրամի ջրանցք, և այժմ իսկ ամեն հայ գեղջուկ գիտի, որ դա Շամիրամի բազում բարեգործություններից մեկն է Հայաստանին հանուն իր մեծ սիրո՞ւմեր արքային, և որ այդ ջուրը այն ջուրն է, նրա մեծ սիրո իր բաժինը՝ երեք հազար տարի անց»:

Ընթերցողին ուղղված խոսքում Ձորայր Խալափյանն ասում է. «Քո ձեռքին է Արա Գեղեցիկի և Շամիրամի պատմաբանական սիրավեպը: Ընթերցելով շատ նորություններ կիմանաս սիրո մասին. ինչպես սերն առաջին անգամ աշխարհ եկավ ու որպես երկնային կրակ երկիր նետվելով՝ այդ պահից սկսվեց սիրո դարաշրջանը պատմության մեջ... Կիմանաս ինչպես ծնվեց սիրո առաջին համբույրը, որը գեղեցիկ մի գյուղ էր տղամարդ ու կին հազարամյա փոխհարաբերության մեջ, և այլև...»:

Ինչպես և տրամադրում է նախախոսքը՝ սկիզբը խոստումնալից է, և գրքի էջերում գրողը իսկապես ամենայն ճշգրտությամբ, եթե կարելի է այդպես անվանել, բերում է նշված նյութի վերաբերյալ իր ուսումնասիրությունը՝ հենվելով իրական աղբյուրների, առասպելական հսկայածավալ նյութի և իհարկե՝ գրողական անկրկնելի երևակայության վրա: Իսկ արդյունքը բացառիկ այս գործն է, որն ամեն անգամ ընթերցելիս այլ էջ ես բացում, և կարծում եմ՝ ամենահին էլ պատահական չէ, որ վերաստույթյան համար ընտրված գործերից մեկը հենց այս վեպն է: Եվ ինչո՞ւ Շամիրամ, Կլեոպատրա, Նեֆերտիտի երեք նշանավոր, տարբեր աշխարհներից գրողի կողմից ընտրվում է Շամիրամը: Պատասխանը կարծում եմ պայմանավորված է եղել կանացի սիրո այդպիսի միայն շամիրամական դրսևորման հանդեպ գրողական հետաքրքրությամբ ու նույնքան հետաքրքիր մեկնությամբ: Իսկ քննությունը միաժամանակ երկկողմանի բնույթ է կրում. ինչպիսի՞ն կարող է լինել սիրող այրը, և ինչպիսի՞ն կարող է լինել սիրող կինը, անգամ այն պարագայում, երբ դեռևս մարդկության անհայտ են սեր, համբույր բառերը իրենց իմաստներով: Սերն այն անհագ ծարավն է, երբ չի կարողանում հագեցնել այրը ինչպես մի կաթիլ ջրի կարիքը՝ անապատում, ասել է՝ «Կինը ջուր է, ջուրը՝ կին»: «Բայց ասում է՝ սիրո մեջ մարդիկ անցան աստվածներից, զգացին, որ սերը խտացնում է կյանքի իմաստը»:

Բավական է միայն գրողի այս խոսքերը արժևորել այն ժամանակի համար, երբ «...բացակայում էր մարդու արժեքի գիտակցությունը»: Եվ ահա «...բաղաբարությունը ոտք է դրել մեկ այլ դարաշրջան. հայտնագործվել է համբույրը՝ որպես սիրո առիվատյալ»:

«Երկու երկինքների պատրանքների պես Շամիրամը անիրական էր», - ասում է հեղինակը: Իսկ ինչ կարող է լինել տղամարդու և կնոջ միջև: Ըստ այդ նույն ժամանակաշրջանի մտածողության՝ բնականաբար, դեռևս անանուն մի զգացողություն, որի անունն է... «դիվահարություն, որից տղամարդիկ կորցնում են գլուխը, առանց պատճառի տխրում և առանց պատճառի ծիծաղում ու լաց լինում»: Ասել է՝ «Շամիրամը դիվահարություն է բերել աշխարհ»:

Մի կողմից՝ գրողի հունորի զուսպ, նրբին զգացումն է, ինչ խոսք, կրկին ամբողջությամբ ընկալվելով ժամանակի կոլորիտային ներկայակերպ նրբերանգներում: Սերն ու խանդը, ցավն ու երջանկությունը, մահն ու սերն անգամ, որ նույնանում են բոլոր ժամանակներում, բայց կարևորը՝ «սիրելիս» թվում է՝ ամենա-ամենա բառը բոլոր սիրող մարդկանց համար այս դեպքում ճիշտ հակառակը՝ ոչինչ չնշանակող, դատարկ ու սին է, որ կարող են գործածել միմյանց ընդհանրապես չսիրող մարդիկ: 21° որ սերը մշտագո ծարավն է անապատում, որ երբեք չի հագեցնում, կամ հագուրդ ստանալ կարող են ոչ բոլորը: Իսկ ինչպե՞ս է ընկալում սերը ինքը՝ մեր պատմիչի սիրո աստվածուհին: Որքան էլ զարմանալի թվա՝ սեր չկա. սուտ է: Բայց սա մինչ այն պահը, քանի դեռ նա չի ճանաչում իսկական սերը, որովհետև ինչ արժեք ունի, թե կնոջը քանի հոգի կարող են խենթ ու մահու չափ սիրել, եթե միայն ինքը՝ կինը, եթե անգամ աստվածուհի չէ, այլ սովորական մահկանացու, չի զգացել սեր ինչ-որ մեկի հանդեպ: «Ես կարող եմ սիրել օձին, միայն թե ճաշակեմ ինչ է սերը», - նրա Շամիրամ կնոջ խոսքերն են: Եվ մեկ այլ արտահայտությամբ՝ «Մահ կամ սեր: Բայց դա նույնն է»: Եվ վերջապես սիրո բանաձևը՝ «Ես երջանիկ եմ, որ դժբախտ եմ, և դժբախտ եմ, որ երջանիկ եմ: Եվ դա սերն է»:


Որքան էլ զարմանալի չէ, խալափյանական հանդուժանքը կամա թե ակամա զալիս է ծածկելու մինչ այժմ շամիրամական սիրո հանդեպ ունեցած վերաբերմունքը, այն է՝ Շամիրամը Արայի հանդեպ տածում էր մեծ սեր, գուցե բոլոր կանացի և աստվածուհիների սերերից ամենատաքը և ամենաիրականը. սա երևում է հեղինակի բոլոր տողերում, և ամենահին էլ մեծ ջանքեր պետք չեն դրան հանգելու համար: Գուցե աստվածներն ու աստվածուհիները սիրում են իրական

ու ամենաառասպելական սիրով, սակայն փաստը մեկն է. այս գրքով նորովի են բացահայտվում թե՛ զգացմունքները, թե՛ դրա դրսևորման ձևերը:

Առասպելական է այստեղ ամեն, ամեն ինչ. ինչպես ինքը՝ ամբողջ պատումը: Գործի շունչը, ոգին, ընթերցելու ռիթմը. ամեն ինչ ծորում է սովորական-արտատվոր մի առասպելից՝ 20-րդ դարի արձակագրի ձեռամբ: Սիրո, առաջին համբույրի, խանդի ու ատելության մասին ժամանակին համահունչ իր բառապաշարով, ոսկերչական մշակվածությամբ, արժանավայել լեզվամթերքով: Լյնպես որ փոքր-ինչ անզգուշության դեպքում հրաշալիորեն կարելի է կորցնել հավասարակշռությունը, ժամանակի ու տարածության ֆիզիկական զգացողությունը և հայտնվել ասորական ժամանակներում, ճանաչել աստվածների՝ լինի լուսնի խավարման թե լուսաբացի, մուժ ու մշուշի, թե պարզապես ամենակատարյալ միրամի մեջ:

Բայց և՛ վեր այդ ամենից՝ Հայոց աշխարհի նկարագրությունը, իբրև հակադրություն Աշուրի, հայկական գույների հրաշալի մեկնաբանությունը, ընդհանրապես գույների զգացողությունը՝ իսկական հայկական բնանկարի: Հայի՝ հայ հողին ու այդ ամենին կապվածությունը առաջին հերթին էներգետիկ զգացողությամբ, ինչը առաջինը և միակը չէ հայոց պատմության և գրականության էջերում: Մյուս կողմից՝ հայ ժողովրդի պատմականության երբեք չվերացող գեներտիկ հիշողությունը, վեհացումը. գրողաբար, հայրենի երկիրը հայի հող ու ջրից մինչև մշտական հաղթանակներն ու երբեք չպարտվելը, ինչը ամենակարևորն է բոլոր ժամանակների համար և այսօր մեզ համար:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ



ՍԻՐՈ ԹԱԼԻՍԱՆ

Նեկտար Սիմոնի «Սիրո թալիսան» գիրքը, որ դարձավ դեպի ակունքը կարոտի կանչ ու շարական կրկին հավաքվելու սար ու լեռան հանդես պապակը հագեցնելու: Շիրակի մարզի Բագրավան գյուղը լուսավոր թախիծով ընդունեց իր ծոցից ընդամենը մի ակնթարթ հեռացած զավակին: Օրը շնչում էր բանաստեղծությամբ, կարոտով ու սիրով...

Աշխարհից կտրված, բայց աշխարհի կենտրոն գյուղում Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքի անդամներին հայոց գյուղաշխարհին բնորոշ ջերմությամբ ու կարոտի սարսուռներով անցած ժամերն ընդամենը ակնթարթներ թվացին, իսկ ժայռերի ծերայերին կառչած հայը իր սարերի զոխ ու սիրելի կարոտին համարժեք մաքրությամբ էր պատրաստվել՝ դիմավորելու իր զավակին ու հյուրերին: Հանդիպումը կազմակերպել է «Բագրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Հերսիկ Հարությունյանը: Ներկա էր մանկավարժական հանրային: Ելույթները ժամանակ առ ժամանակ ընդմիջվում էին հայոց խրոխտ պարով կամ կարոտի ու կանչի մեղեդիներով: մեներգերով հանդես եկան դպրոցի 8, 10, 11-րդ դասարանի շակերտները, միջոցառմանը մասնակցեց նաև դպրոցի պարի խումբը:

Ելույթներով հանդես եկան Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքի մախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարինե Մարտիրոսյանը, շուշեցի բանաստեղծ Ռոբերտ Եսայանը, ազատամարտիկ, գրող Մնացական Մուրադյանը: Գրքի և բանաստեղծուհու մարդ տեսակի մասին հուզիչ խոսքով հանդես եկավ գրքի խմբագիրը՝ բանաստեղծուհի Հռիփսիմեն:

...Հայոց կռուները թևածում է հայ երկնքում անկախ ֆիզիկական հեռավորությունից, հայ երզն ու պարը, հայ պոեզիան՝ կարոտագույն աչքերով, միշտ կռուների սևասթ թևին են... Այնքան սևորակ, որքան ուսը ընկերոջը մեկնած՝ պարող այն պատանյակի ծով աչքերն են՝ հայացքը հայրենի եզերքին, սիրտը՝ աշխարհի խաղաղության կանչին:

«Աջ ձեռքիս սիրո թալիսանն է», -ասում է հեղինակը Նեկտարը: Ինքնամաքրվել՝ սիրո ճերմակով, սեր, որ «ամպերից կախված խաչի օրհնանք է, քարե մատուռ է, մեղքի կռիվ է, ծիծաղի փունջ է» և վերջապես «լացի հորձանուտ»: Մաքրվել երկնային կատարներում լույսի, գույն ու երազի նրբախյուս շղարշի ներքո: Ապա կանչ ու կոչ սիրո էակին, թե «իմ երազներին թռչնի թևեր տուր... Ինձ հավատա տուր»: Նրա սերերը «կարոտագույն» են, «աչքերագույն» են, գուցե աղբյուրի ջրի

ու ցորեն հասկի գույն են՝ անպայման վերադարձի ակնկալիքով, սակայն և՛ «Եթե եկել ես, // Քեզ կասեմ բարև, // Սակայն ինչպե՞ս ես // Նորից հյուսելու // Ծաղկաթելերի // ճոպանները պիրկ // Երկինքներ տանող... // Ինչպե՞ս ես նորից // Կաթնաջրելու // Բոբիկ ոտքերս...» Եվ անունը սիրո ու երջանկության՝ որպես հոգու անձայն շարական, որպես պատրանք... գուցե՝ սին ու անգո:

Բանաստեղծական բոլոր նրբերանգներում գերիշխողը ճերմակն է ու պարզությունը, մաքուրը՝ սերը, վերածնվելու խորհուրդը նաև՝ «լույս ճոճքերի մեջ» մի դեպքում, մեկ այլ դեպքում՝ լողանալը Աստուծո երկինքներում կրկին մաքրության, ինքնամաքրվելու խորին խորհրդով:

Գրքում երկու շարքերը ներհյուսված են մեկմեկու. առաջինը ինքնօրինակ, անարատ սիրո դրսևորումն է, երկրորդը՝ «Արահետները», սեր ու կանչ է՝ առ հայրենի երդիկն ու ծուխը, հազարերանգ կարոտները, որ զանգ են ու շարական... «Ինձ ի՞նչ տվեք... // Իմ կանաչ թունձր // Ձոխ ու սիրելիս, // Սորս հայացքը // Հորս աչքերում, // Աղեխ շալը // Մաշված ծոպերով, // Երկիրս տվեք, // Որ բարձրաձայնեմ // Ապրում եմ էլի»:

«Մեր գյուղը, գյուղը // Դեք քիաթ է, որը // Դեք գրվի պիտի», - դաշտից պոկած-տեղահան արված մի ծաղիկ, որ հայտնվել է, իր խոսքերով, հուշի մանառով ցավի տակառում՝ բոլոր առումներով: Ցավը՝ շքեղ, հողագույն, չսպասված մի հյուր, որ ներթափանցում է մաշկի տակ, այլևս անվերապահ տանտեր դառնալով, անդադար հիշեցնելու է կնոջական հոգու թելահան եղած կարկատանների քարհանգույցները: «Դու գիտե՞ս արդյոք // Որտեղ է քնում // Արցունքը վճիտ, // Որ հետո՞, հետո՞ // Բյուրեղանում է // Հոգու ծալքերում»:

Կանացի քնքշությամբ արարված տողերը հավաքված են հատիկ առ հատիկ: Սա հոգու խռովք-բանաստեղծումի, կարոտների, երեկվա, այսօրվա ու վաղվա իր ու իր մանների ճանապարհն է: Իսկ սկիզբը, ակունքը ինքնամանաչումից, ինքնամաքրվելուց ձգվում է դեպի վաղվա՝ իրականանիրական քար-արձանը՝ հոգեքնության, ինքնաբացահայտման մի ծես՝ հրաժարումի, բացասումի միջոցով «Իմ մաքրման ժամն է // Աղոթքներս վկա...»:

Հարկ է նշել, որ գրքում բառակերտման հետաքրքիր օրինակների ենք հանդիպում: Բանաստեղծուհուն հաջողվել է ստանալ նաև ուշագրավ պատկերներ, արտահայտություններ, որոնք պարզ են, գեղեցիկ ու տեսանելի: Սրանք լռության ճիչ ու պայթյուններ են՝ բանաստեղծության, հուզագագացական հողի, կարոտի ու տառապանքի հեքի արտահայտությամբ: Ժողովածուն շնչում է այդպիսի պատկերներով նորովի, չկրկնվող և զգայուն: Եվ շրջանցել դրանցից մի քանիսը ուղղակի անհնարին կլինեն:

«Ու թաշկինակդ // Այն կապտերից // Եվ վանդակավոր, // Օրորում է դեռ // Երազներս տաք, // Ու գրպանումս // Գիշերամութի // Թիթեռ է դառնում...»:

«Իսկ դե՞մքս, դե՞մքս // Նման է ձմռան // Բնանկարի, // Որտեղ սառույցը // Հեքիաթ է գրում // Կարապափետուր»:

«Եվ թռչունները // Իմ կարոտների // Կցնդեն օդում // Ամպերը լքած // Փոփոխների պես»:

«Խոր լռությունից // Թախիծ է կաթում // Բարձրիկ սարերում // Դառնում անպաշերտ, // Հետո հանց ապար // Գլորվում է խոր // Ձորը հառաչի...»:

«Բաց արեք դուռս. ես մի շապիկով երկինք եմ գնում...»:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկն., դոցենտ

ՍԻՎԱՌԵԼՈՎ «ՍԻՐՈ ԹԱԼԻՍԱՆ»-Ի ԿԵՆՏՐՈՆ ՈԳԻՆ

Հեղինակի մտածողությունը պատկերավոր է և հուզիչ, վարակում է անմիջականությամբ ու ներքին կրակով: «Ես վախենում եմ // Երազիս վրա թափվող ձյուններից»: Երեք տողով ապրող կենսագրական թրթռ, որ առնչության լույսով բացահայտում է հոգու գաղտնագիրը: Սերը: Նեկտար Ավդալյանի բառերը ինքնարտահայտման լավագույն միջոցներ են, որոնք ազատության ելքեր են և հեռու են ճիգերից: Հիշողության մեջ տպավորիչ հետք են թողնում բանաստեղծուհու ստեղծած պատկերները. մոռացումի գամբյուր, հուշածաղիկ, լացի հորձանուտ, հուշի շքեղ թիկնոց, արցունքների քարեր, արարումների ճոճքեր, դրախտոտ այգի, հուշերի գինի, համբերության ծովախորշեր: Պատկերային հուզականության հենքին նոր լիցք են հաղորդում նաև նորաստեղծ բառերը. «արտածայներ, կարապափետուր, ինքնաշուկավել, ճերմակակապույտ, հուշապտույտ, համբուրյապատրանք, բառաշաղախ, նեկտարավարի, եղենապատրանք, փրփրախշոց, վարդաթերթե, սգագույն, կյանքատուր...»:

Նեկտար Սիմոնի չի կաշկանդել իր խոսքը հանգերով: Գրել է բանաստեղծության բացշրթայազերծ չափով՝ ինքնարտահայտման հորդ ալիքները հասցնելով խոստովանանքի տաք ափերին: Գրքի խմբագրի՝ բանաստեղծուհի Հռիփսիմենի կարծիքով, «իրար հաջորդող այս փիլիսոփայությունը հոգու սիմֆոնիա է, բացարձակ չոտնակոխած մի դաշտ, որտեղ կան մաքրություն ու առիճնող ընթացք»: Հերոսուհուն շրջապատող իրերն անգամ դառնում են հոգու երանգների արտահայտություններ:

Կուզեի նաև // Առավոտ ծեփին, // Դեռ քնաթափս // Լսեիր ձայնս // Բարի լույսի հետ, // Դեղձմանիկների // Ծվվողի մեջ // Բառերդ նորից // Հոգիս գերեմի, // Թեյնիկը եռար. // Գլորշու միջից // Ամպեր ելնեմ, // Ու ես խաղայի // Գանգուրներիդ հետ... // Սեղանին լինեմ // Գինի, նուռ, դանակ: // Կուզեի նաև // ճերմակ շապիկդ // Պարանին շողար, // Քամու հետ պարեր, // Ինչպես երեխա // Հրեշտակաթև...

Թալիսանը ոչ միայն միշտ կին է պահում տաք տողերով ասեղնագործող բանաստեղծուհուն, այլև դառնալով ներշնչանքի աղբյուր, երջանկության ցուլքերում բացահայտում է սիրո գաղտնիքը. «Բարձիս ծալքերում, // Պատերի վրա, // Լուսամփոփիս մեջ, // Անքուն աչքերիս // Սև քարթիչներում // Պիտի շողշողա // Ժայնակագործված, // Երբեք չմաշվող, // Նախշերով կյանքի, // Ինձ միշտ կին պահող // Սի հին

Ազատությունների երկինք եմ ապրում...

թալիսան, // Սիրո՛ թալիսան»: Գիրքը կազմված է երկու շարքից: «Ես ու դու» շարքը կարելի է համարել նաև Սիրո պոեմ, որի մեջ կերպավորվել և բառերի շնչառության մեջ հարատևում են Սիրո պահերը: «Արահետներ» շարքը մարմնավորում է բանաստեղծուհու մտորումներն ու զգացողությունները՝ կապված հայրենի գյուղի, գերդաստանի հարազատ ոգու թրթռներին ու նրբերանգներին: Ստեղծագործական երկու պահերը: «Արահետներ» շարքը մարմնավորում է Սիրո կրակը՝ միավորելով «Սիրո թալիսան»-ի կենարար ոգին:

Ռոբերտ ԵՍԱՅԱՆ

Երբ ասում են հայրենիք, առաջին հերթին ի նկատի են ունենում ծննդավայրը, որտեղ կազմավորվել է մարդը՝ բնության կնիքով, իսկ մեծ առումով՝ ամբողջ Արևելյան և Արևմտյան Հայաստանը, սակայն մեր տունը ունի նաև հստակ հասցե՝ տվյալ դեպքում Բագրավան:

Բագրավանը հող ունի, ջուր ունի, ջուրն էլ երկնքից է կախված, իսկ մեզ մոտ՝ Անի-Պեմզայում, որը ընդամենը մի քանի կիլոմետր է հեռու այստեղից, քարն է թագավորում:

Քանի որ իմ աշխարհը իմաստասիրությունն է, ասեմ, որ լիովին համամիտ եմ Հռիփսիմենի՝ Նեկտար Ավդալյան պոետին տրված բնութագրին, որ վերնագրել է «Կանաչ դաշտի լռություն»: Ոչ մի չափազանցություն, ամեն ինչ պարզ է, զուլալ ու ներդաշնակ:

Սեր ու մեծ ցավ կա այս գրքում, սակայն այն մատուցվում է մեծ սիրով, որը տանում է վեհության. վեհությունը ցավը հաղթելն է:

Հեղինակի բազմաթիվ գեղեցիկ տողերից առանձնացրել եմ հետևյալը՝ Սերը, սիրելի՛ս, աչքերազույն է, // փայլ ու ճաճանչ...

Ինչպիսի՞ վերաբերմունք գույներին, և ի՞նչ փայլուն բնորոշում... Գույների պոեզիա: Հեղինակը օժտված է վառ երևակայությամբ և խորքային մտքով:

«Սիրո թալիսանը» ամբողջովին ստեղծված է «բնությունը սեր է» սկզբունքով, որտեղ սերը, բարությունը, կարոտն ու տառապանքը միախառնվելով երանգավորվում են բանաստեղծուհու ուրույն ոճով և մատուցվում առաջին հայացքից պարզ, բայց էությամբ խորքային, գեղեցիկ ու հմայիչ ոգով:

Գիրքը օժտված է մեծ թափով ու թռիչքով, որը ընթերցողը բացում է ակնկալիքով, փակում՝ հարստացած:

Մնացական ՍՈՒՐԱՅԱՆ

Հուշապտույտիս Ելևէջներում Աշուն է նորից, Թեպետ գարունը Թակել է դուռս... Մի ամբողջ գիշեր Պատուհանիս տակ Սերենաղ էր հին. Նվագում էին Անձրևն ու քամին, Իսկ երեկոյան, Նրանց միացավ

Սի ճերմակ, քնքուշ Չնե փոթորիկ... Եվ դու տուն եկար Փոթորկի նման՝ Թռչված մազերով, Բարակ վերարկուդ Մի քիչ ձյունոված, Հայացքիդ խորքում՝ Անորոշություն: Սեղանին թեյի Բաժակներն էին, Թանձր գուլորշին Համբուրյապատրանք, Վեր էր բարձրանում Ու անհետանում: Դու պատմում էիր Խելագար քամու, Անձրևի մասին: Ես քայլում էի Քո ծայրի միջով՝ Ամպերի վրա: Երջանիկ էի. Քո հայտնությունը Աստղային էր... Հետո գնացիր Հանգրվանը քո, Տանս մնացին Օժանելիքիդ Դաշտային հոտը, Վերարկուդ բարակ...

Ճամփեքից պոկված Փայլուն կոճակդ Դու պահ տվեցիր Քո ծախ գրպանի Դատարկությանը, Որ սրտի՛ս, սրտի՛ս Միշտ մոտիկ լինի: Եվ այսքան տարի Ցավոտ մատներս Չեն կարողանում Ասեղը թելել, Եվ գոնե մի կերպ, Մի վերջին շնչով Կոճակդ կարել, Որ երբ ցուրտ լինի Ու մնա դրսում, Կոճկվես ամուր... Աստղացել է այն Իմ պահարանում. Երբ դուռն եմ բացում, Նայում է նա ինձ Անթաթ աչքի պես, Ու փայլը, փայլը Ձեզում է մութի Հետքերը բոլոր... Ես միշտ հարուստ եմ Քո այդ կոճակով:

ՍԻՐԱՊՏՈՒՅՑ

Սերն այսպիսին է, Այն էլ՝ ուշացած. Անկտորում կուժ է, Խնոցու կարագ, Ամպերից կախված Դաշտի մորմոքն է: Ու տատիս կանչն է... Սերն այսպիսին է, Հասկացե՛ք, մարդիկ, Ցուլանք է, ցավ է, Թոճիկ կրակ է, Քարե մատուռ է, Ձրվե՛ժի պաղ երգ, Նռան հատիկ է, Ցորե՛նի վարսեր... Սերն այսպիսին է. Սեղի կռիվ է, Հավատի արցունք, Ծիծաղի փունջ է, Լացի հորձանուտ... Ուշացած սերը Նման է սխալ ժամադրության, Գճում ես, գճում Ու տեղ չես հասնում...



ՉԳՍ Շիրակի մարզային բաժանումը և «Եղեգան փող» պարբերաբերթի խմբագրակազմը շնորհավորում են արձակագիր Շնորհիկ Շահինյանին ծննդյան տոնի առթիվ, մաղթում ստեղծագործական ավյուն ու արևաշառուխը:

ԽԱՂԱՑԱԿ


Երեխեք, տեսեք, Շլագբաուն քեռին պարում է: Մանկական գմայլանքով նայող աչքերի դիմաց, ճաղաշար սրահի ներսում էր Շլագբաունի հսկայական կերպարանքը: Դեռուստացույցից բխող, արյան հանգած թունդ երաժշտությունը գտել էր մարդու խելված մարմինը, և մարդը վրեժ էր լուծում իր խելված մարմնից: Կողքերից անճար ճոճվող, զարկված թռչունի թափահարումով՝ նա օրորվում էր՝ ռետինե սև կորսետի մեջ զսպված-հավաքված ողնաշարը մի կողմի վրա պահած: Երկար, փաթ ընկնող ոտքերը մի կերպ պահելով մարդու ծանրությունը՝ շարունակում էին անհավասարակշիռ տարուբերել

ու դոփդոփել հատակը: Քափուքտիների մեջ կորած Շլագբաունը շարունակում էր մեն-մենակ պարել դափ-դատարկ սրահում: Խելված մարմնի յուրաքանչյուր մասը շփմավորելու, գեղեցիկ ու հարկավոր, առնական ու դյուբիչ ներկայացնելու մղումը ցնցում էր նրան ոտից գլուխ: Դաստ, առողջ պարանոցի վրա գլուխը միայն ուղիղ պահելու կարողությունը ի գործ էր դրվել կարեկցանքով մարմնի յուրաքանչյուր մասը՝ սկսած ջարդված ողնաշարից: Ցավագին կծկումներով շուրթերն իրար սեղմած, շուրթերից ետ տարածվող, փոթ-փոթ, իրար վրա ծալծվող կնճիռների կուտակումները, դրանց արանքում թաղած սև-խոշոր աչքերից գլորվող արցունքները մատնում էին մարմնի տառապանքները, բայց պարը ջնջում ու ոչնչացնում էր ցավը, որ շամփում էր կորսետի տակից, և մարմնից տարածվում էր ռեզինի քրտնահոտը: Ցավը մեջքից հոսում էր մինչև ծնկները, քաշում էր ներքև, ասեղնահարում ողջ մարմինը: Դեռուստե անհագնացող երաժշտությունը՝ ավելի կտրուկ ու անողոր դարձնող շարժումները, ուժասպառ էին անում մարմինը, բայց երաժշտությունը պահանջում էր պարել: Եվ հսկայական խաղատիկնիկի պես ճոճվում էր մարդը՝ ավերելով տառապանքի ու երանության սահմանները: Ապավինելով ապուշ կտրած մանկական հայացքներին՝ Շլագբաունը իր մեջ ուժ գտավ երաժշտության ճիշտությունից դուրս կորզելու անզայացած մարմինը, հսկայական շոշափուկի նման իրար հավաքեց ճոճվող թևուտը, մեջքը ծռած, մի կերպ գոտկատեղը բռնած, կաղալով հասավ աթոռին: Ազատ ձեռքով կառչելով աթոռի հենակից՝ նա կռացավ, պտտվեց տեղում, փորձեց ծալել

ծնկները: Ոչինչ չստացվեց, անհնազանդ ոտքերը չուժած մնացին, մեջքը պահող ձախ ձեռքը թուլացած կախ ընկավ, գլուխը մի կերպ հարմարեցնելով աթոռի հենակին՝ Շլագբաունը թեքվեց առաջ ու անշարժացավ: Սրահում դողդացող երաժշտությունն այլևս անկարող էր ոտքի հանել նրան: *** Գիշերային դավադիր անդորրը ճեղքեց մայրուղու կողմից պայթած տազնապալի ճռնչը, որին հաջորդեց կանացի սուր աղաղակը: - Շլագբաունին մեքենան թխիլ ա, - քնահարած եղած օթևանի բնակիչներից առաջինը ետ եկավ մայրուղուց: Սլաքավարի տմակի ու ուղեփակոցի ճաղերի արանքում տապալված ծառի նման չոքել էր Շլագբաունը: Տնակից հորդացող լույսը մխիթարողի պես պարուրել էր նրա անկեղծ մարմինը՝ հավաքվածներին ցուցադրելով ցավագին մանրամասներ: Ճաղերից վար կախված էին ջարդոտված ձեռքերը: Մթան մեջ սպիտակին էին տալիս դաստակները: Վիզն առաջ թեքված, կարծես ուզում էր անցնել ճաղաշարը՝ իր հետ տանելով տապալված մարմինը: Աշնանային կարծ վերարկուն կուչ էր եկել, ծալծվել մարմնի վրա, իսկ ոտքերը մարմնից անջատվելով մնացել էին գնացքի գծերին՝ տափակած ու տրորված: Ցավագին մի պար վերջնականապես անջատել էր նրա խելված մարմնի մասերը և շարտել այս ու այն կողմ: Ցածր, միալար հեծկտոցով ամբոխից անջատվեց որդին, և նրա վրա ստվերը խոնարհվեց հոր դիակի գլխավերևում: Ստեղծողների ստվերները ծածկեցին հորն ու որդուն:

Գյուղը մերժեց սլաքավարին տեղ տալ իր Արմատանը: Նրան թաղեցին շիրմատան պարսպի տակ, իր ուղեփակոցից ոչ հեռու: ՍԿԵՏԱ Խավուտ խալաթի միջից ծեծեքվող կնոջ մարմինը խելահեղ արեց տարեց ձկնորսին: Խալաթի փեշերն իրար բերող Սվետայի ճերմակ ձեռքը զգլխից խաղ է ներկայացնում: - Ախպեր ջան, ծուկուն կա՞: «Ախպեր ջան»-ը ձկնորսական ռետինե սապոգների մեջ մարմնի կեսը խրած, նախորդ գիշեր կոնծած օղու թողած ավերածություններից ճնթթված դեմքը մի պահ մեխեց հայտնված տեսիլքին: Դետո մազմզոտ դուռը կախվեց, փտած ատամները ժպիտի տակ խլվացին, աչքերը ջրակալվեցին երանելի տեսիլքից: - Դաջա՞ն: - Չուկուն, ասում եմ, ծուկուն կա՞: Ժպիտը լղոզվեց շուրթերին: Մեջքը մի կերպ ուղղելով, քրքրված ցանցի պատառիկներից կախված ձկները կրկին ջուրը նետելով, ձկնորսը դուրս եկավ ջրից, չլմփացնելով, մանրումեծ ալիքներ փախցնելով ունատեղերից: Նայլոնե նուրբ տոպրակը խշրտաց կոշտ ափերի մեջ: Ետևում թողնելով Սվետայի տաք ծիծաղը՝ ձկնորսը ափից սառը ջուրը, ճանկեց մի քանի ծուկ ու սահեցնելով տոպրակի մեջ, պաղ ջրի ու տաք ծիծաղի երանելի արանքում՝ տնկվեց Սվետայի առաջ: - Ա՛ռ, քեզ մատաղ, հալալ է: Դետո կապույտ խալաթի հրաշքը պոկվեց կապույտ լճից, հեռացավ, փոփոցաց անառիկ կանաչ փեշին, հայտնվեց քարաժայռի վրա ու կորավ ժայռի գլխին

բազմած օթևանում: Ձկնորսի անշարժ աչքերը երկար չդիմացան կապույտի հետապնդմանը, և նա նորից գլուխը կախեց ջրի մեջ տարուբերվող ցանցին: - Գլուխդ քյուլեմ, բիժա: Օթևանի երկար միջանցքում կրակվեց Սվետայի քրքիջը: Աստիճանների գլխին տնկված Քյարամի անթրաշ կերպարանքը իրար վրա բերեց Սվետայի անարգել ծիծաղացող փեշերը և մատների ծայրով խալաթի կորած մեղքը մեղմացնելով, համարյա անտեսելով, Սվետան շնչակտուր վեր ելավ: - Իմ խեղճ Քյարամ, տե՛ս, ծուկուն եմ պիրել: Քյարամի աքլորային հպարտությունը համարյա չընդունեց փտած ձկնորսի պարզևի անշահախնդրությունը, ու նա հերստատած, մի քանի քրքմնջոց արծակելով, հետևեց Սվետայի փափուկ ու խոստումնալից քայլերին: Կարճ միջանցքից ու ներքև իջնող աստիճաններից հետո նախանձահարույց զույգը հայտնվեց փակ դռան մոտ: Քյարամը կիպ մոտեցավ դուռը բաց անող Սվետային և ջրալի մի համբույր դողմնելով կարճ կտրած մազերից ներքև գահավիժող մերկ պարանոցին, գոհ խնդմնդաց: - Շան աղջիկ, ինչի՞ ուշացար: Դետո դուռը ներսից փակեց: Դռան առաջ նայլոնե տոպրակից կաթկթած մի քանի կաթիլ դանդաղ ներծծվեցին ուղեգործի մեջ ու շուտով լրիվ անհետացան: Մենավոր մի ճայ, թրատելով արևի ու ջրի կարմրաշերտերը վերուվար արեց, պտտվեց ջրի վրա, ապա կտրուկ ներքև սլացավ: Մի պահ միայն հավելվել ջրի մակերեսին՝ վեր սուրաց՝ կոցին արծաթե ձկնիկը: ՇՆՈՐՅԻԿ




Օգոստոսի 24-ր Արցախյան 44-օրյա պարերապետն անհուսալից Ալեքսան Արսենյանի ծննդյան օրն է: Մեր խոնարհունը մարտական սիրունների հասակարարի անջամ հերոսի կիշարակիլ:

Ալեքի հետ կապված ամեն ինչն ուղեկցվում է ժպիտով... Գիշտ է, էս անիծյալ պատերազմից հետո էլ ժպիտն առանց արցունքների չի ստացվում, բայց մեր լուսավոր տղան իմ հուշերում միշտ լույս ու ժպիտ պարզևող, արժանապատիվ գյուրեցի տղա է մնալու: Կան, չէ՞, դեմքեր, որ հենց առաջին պահից մտնում են սիրտդ, տպավորում են ու զգացնել են տալիս իրենց լավ մարդու տեսակը... Այդպիսին էր իմ ուսանող Ալեքը: Դեռ առաջին հանդիպումից տպավորվեց խոսուն հայացքով, միշտ կոկիկ, ժպտուն աչքերով ու դասերից շատ բացակայող... Երբ հանդիմանում էի՝ ո՛ր էս, ինչո՞ւ դասին չկայիր... կարճում էր, գլուխը կախում

ու ժպտացող աչքերով, լայն ժպիտով պատասխանում էր. «Զիդեի, օր ձեր դասն է, ընդեր Միրզոյան...»: Ինքը դասին ուշացած կգար, բայց թե մեկն էլ ընթացքում լսարանի դուռը բացեր, կարժանանար Ալեքի սաստող հայացքին ու խոսքին դաս է, չէ՞ ս տեսնի... Դասախոս հարգող Ալեքս... դեպի կանգառ տանող ճանապարհին ֆիզիկայի ֆակուլտետի մոտ, երբ անցնեի, ընկերների հետ էր... Թե նստած էր լինում, դեռ հեռվից ինձ տեսնելով տեղից ելնում էր, ընկերներին էլ հանում... Ժպտալով մոտենում, ասում էի՝ Ալեք ջան, ընկերներիդ ինչի՞ ես հանում, իրենք ինձ չեն էլ ճանաչում... Նույն բարի ժպիտով ընդեր Միրզոյան, ըզիզ հարգանքի նշան է... Մի օր էլ հարցրի՝ սովորաբար դասախոսներին ու ուսուցիչներին յուրահատուկ հարգում են մանկավարժների ընտանիքի զավակները. ժպիտով ու ենպիսի՝ ջերմությամբ ասաց՝ մայրս ուսուցչուհի է... ու էնքան հպարտությամբ ու սիրով, որ ակամա հարգանք տածեցի մեր ժամանակներում էսքան դաստիարակված որդի պարզևած անծանոթ կնոջ հանդեպ: Միտում էր իր Գյումրին, խոսում էր բացառապես Գյումրիվա բարբառով, ինչի պատճառով մի օր մեր դասախոսներից մեկը հանդիմանեց, թե՛ տղա՛ ջան, դու երևանի պետական համալսարանի ուսանող ես ու զո՞նե էստեղ պետք է գրական հայերենով խոսես... Ինքն էլ թե՛ «է՛, հա՛, ընդեր Մարկոսյան, էս գրական մեր

բարբառով կխոսիմ...»: Ալեքի կուրսը ֆակուլտետում սիրված էր. կորիզ կար, համարյա բոլոր տղաները ծանայած, մի քանիսն էլ Ապրիլյանի մասնակից էին ու կապված էին իրար: Դատկապես տպավորվեց ուսումնական պրակտիկան, երբ Դանքավանում էլ կուրսի հետ մեկ շաբաթ անցկացրինք... իմ ուրախ, կյանքով լեցուն, բարի ու թեև չարածճի, աղմկոտ, բայց ընկերասեր Ալեքն իր տեսակով էլ ավելի տպավորվեց... որտեղ՞ քե՛ք, երգ ու պար, խաղ, էնտեղ՞ Ալեք... Իրենցից մի օր շուտ էի պրակտիկայից վերադառնալու, աղջիկներից մեկին՝ Ալեքի ընկերոջ սիրելիին, հետս քաղաք էի բերելու... տեսնեմ իրենց խմբով, ուսներին աղջկա իրերն առած, երգելով, պարեցնելով, թե հարսի օժիտն ենք տանում, մոտենում են մեքենային... Ո՞նց չպիրես էս խեղճերին... Ու հիմա ամեն առավոտ օրս սկսում եմ իր անվան լսարան մտնելով, նայում եմ նկարին, ժպտում է, բայց չի ելնում տեղից... Ե՛ն խոսում հայացքն ասես ասում է՛ էլ չեմ բացակայելու ոչ մի դասից, ընդեր Միրզոյան... Դեկանն ասաց, չէ՛, այլևս ձեր հավերժ ուսանողն եմ... ԵՊՅ-ի դասախոս Լյուբա ՄԻՐՉՈՅԱՆ



Նոր գիրքեր

Պատրաստեց Ն.Նիկողոսյանը



«Տիր» հրատարակչությունը լույս է ընծայել Հայկուհի Գյողայանի «Թանուի անտոմիան» գիրքը: Գրքի առաջաբանում Գևորգ Էմին-Տերյանը նշում է «Հեղինակի ընկալումն այնքան քնարական է, որ նույնիսկ ի բնե էպիկական դրվագները վերածվում են քնարականության դրսևորումների: Գրքի կառուցվածքը ևս շատ հետաքրքիր է, ազգային չձևակերպված-չհիշված առասպելից մինչև կարճ, զգացմունքային պոռթկումը, ընդհանուրից կոնկրետը, արմատներից ու աշխարհից մինչև սիրտ»:



«Արմավ» հրատարակչությունը ընթերցողի սեղանին է դրել երիտասարդ բանաստեղծ Միշա Մանուկյանի «Չարբաս տողեր» ժողովածուն, որը բացահայտում է հեղինակի հույզերն ու ապրումները: «Առանձնակի երանգավորում կա այն բանաստեղծական տողերում, որտեղ հեղինակը միշտ հանդգնում է գտնել այն առանցքային դեպքերը, որոնք կարևոր են իր բանաստեղծության կառուցվածքի համար»,- նշում է գրքի առաջաբանի հեղինակ Վովա Արզումանյանը:



«Դպիր» հրատարակչությունը լույս է ընծայել Յուրի Հարությունյանի «Իմ Գողգոթա» խորագրով ռուսերեն չափածո ստեղծագործությունները: Գրքում տեղ են գտել հեղինակի բազմաթիվ գործերը բանաստեղծություններ, կերպավորություններ, մաքսիմներ, ասույթային դատողություններ և պիես: Գիրքը լույս է տեսել Գյումրիում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի հոգածությամբ:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

ԿԱՄԻԼԱ	ՀՈԳԵՅԱՑ	Փոխակերպությունն է...	հնամաշ փողոցում, Անհաւատալի պատմութիւններով լցրել է գրպանները	Խաղ
ԱՌԱՒՕՏ	Մի օր, Անկրկնելի երազներ, Նուիրական մի քանի բառ վերադարձնելու համար, Երբ շան նման հոտոտում ու քրքրում էի Ինձ համար ընդհատուած ժամանակը, Լուուեց կրակոցի ծայն. Միակ բնակիչը իմ քաղաքի հեռացաւ, Ինձ թողնելով բազմակարկատ մի երկրագունդ:	ՄԻՐԱՊՏՈՒՅՏ	Սերն այսպիսին է, Այն է՛լ ուշացած. Անկտորում կուժ է, Խնոցու կարագ, Ամպերից կախված Խաչի օրհնանք է, Պապիս մորմոքն է Ու տատիս կանչն է... Սերն այսպիսին է, Հասկացե՛ք, մարդիկ, Տղանք է, ցալ է, Թոնրի կրակ է, Քարե մատուռ է, Ջրվեժի պաղ երգ, Նռան հատիկ է, Տորենի վարսեր... Սերն այսպիսին է. Մեղքի կռիվ է, Հավատի արցունք, Ծիծաղի փունջ է, Լացի հորձանուտ... Ուշացած սերը Նման է սխալ ժամադրության, Գնում ես, գնում Ու տեղ չես հասնում:	Կին – կոն – կոտ – խոտ Կինը նայեցաւ յուշերով Կոնածել էին Կոտով չափեց ու տեսաւ Նուագած բայց խտացած ճառագայթող մարգրիտ Իսկ էութեամբ Թրթռացող ցօղի կաթիլ Մատղաշ ու թարմ տերեւին
2017թ.	2016թ.	2016թ.	2016թ.	Ցաւ
ՏԱՐ ԻՆՉ ՔՈ ՀԵՌՈՒՆ	Մի՛ դիպչիր յուշիս. Նա իր մէջ ներծծում է Ապրած օրերիս հանրագումարը՝ Մահից յետոյ Բացակայութեան հանրահաշիւը սեպագրելու ճակատին ճակատագրի:	***	ՍԱՐԻԱՆԱ ՊԵՐԹԻՉԼԵԱՆ ԴԱԶԱՐԵԱՆ ՀԱԼԷՊ–ՍՈՒՐԻԱ	մոռցեր էր թարմութիւնը անձրեւներուն գրգիռը կողերուն գինովցնող բոյրը մայրամուտի խաղիսաբին մէջ
2017թ.	2016թ.	***	ԱՆԾԻՐ ԴԱՇՏԻՆ ՍԷՉ	կիսալուսին էր չամբողջացած
Երկնքի շնչառութիւնը լուրթ կապոյտի մէջ զսպանակած, Ազատութիւնն ինքն իր մէջ թռցնող թռչուն, Տա՛ր ինձ քո հեռուն: Քո թելերը հրեշտականման են, Իսկ թռիչքը՝ գնդակահարուած: Հորիզոնից այն կողմ բազմել է դատարկութիւնը Ու եզերքներում անտես Յուշն է ծրարում սաւառնանքը գոյիդ: Գիշերը մարմնացել ու կարծր մատներով սեղմում է ուներս, Եւ սեւ կողերն է հալեցնում մէջքիս, մինչեւ լուսաբաց: Թռչո՛ւն, Տար ինձ քո հեռուն...	ՓՈՒՍԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ	***	ԱՆՏԻՐ ԳԱՇՏԻՆ ՍԷՉ	ծնած էր ամենէն գեղեցիկ հովիտին մէջ աշնանային օր մը մոռցուած թեւակոտոր հեռացող երազներու սէրէն վայրի մոյթներ կային վարզող անոնց աչքերուն մէջ կարողացեր էր տեսնող խենթ գիշերներուն առանց գիրերը ճանչնալու առանց հեգելու
2017թ.	2016թ.	***	ԱՐԵՎԱՅԻՆ ԵՎ ԿԱՄԱՆ ԳԱՐԻՐԵ-ԵԳԻՊՏՈՍ	արեւը խանձեց գինք լուսինը փայփայեց Եւ հողը միշտ թարմ մնաց կողերուն
Երկնքի շնչառութիւնը լուրթ կապոյտի մէջ զսպանակած, Ազատութիւնն ինքն իր մէջ թռցնող թռչուն, Տա՛ր ինձ քո հեռուն: Քո թելերը հրեշտականման են, Իսկ թռիչքը՝ գնդակահարուած: Հորիզոնից այն կողմ բազմել է դատարկութիւնը Ու եզերքներում անտես Յուշն է ծրարում սաւառնանքը գոյիդ: Գիշերը մարմնացել ու կարծր մատներով սեղմում է ուներս, Եւ սեւ կողերն է հալեցնում մէջքիս, մինչեւ լուսաբաց: Թռչո՛ւն, Տար ինձ քո հեռուն...	Բախտի զոհասեղանին Ամէն օր մեռնում է ճակատագիրը՝ Արեւելք-Արեւմուտք Հիւսիս-Հարաւ Անվերջ խաչուելով: Խելագարուած օրուայ ճիրաններում Կրնջում է ձին՝ Ինքն իր ստուերը դաջելով Փրկութեան լուսանցքներում Թպրտացող լոյսին: Անդունդի եզրին	Երբ տղամարդը Դէմքիս մօտեցրեց իր ափը, Ես հասկացայ, Որ վաղուց արդէն քսան տարեկան չեմ, Ու սեւաչուկ մի երեխայ Քրքջալով անցաւ իմ կողքով՝ Դաշտերի անծայրածիր հեռուններում թողնելով Իմ մանկութիւնը: Ես հասկացայ, Որ աշունը դանդաղօրէն բարձրանում է Ամենատխուր օրերի վրայով, Ու հերթական ծաղրածուն, Չանձրոյթով կարկատուած այս	Արեւալոյս է անհունին մէջ Կիսափուլ տուներէն ներս Աղօթքի խունկ սպասում	Եւ որովհետեւ հողը միշտ թարմ մնաց կողերուն ինք ալ վերածուեցաւ խոտի Եւ ամէն գարնան Գորովի կը կանաչի
2017թ.	2016թ.	2016թ.	ԿԻՆԸ, ՈՐ ԿԱՄԱՑ ԿԱՄԱՑ ՎԵՐԱԾՈՒԹԵՑԱՒ ԽՈՏԻ	Եւ որովհետեւ հողը միշտ թարմ մնաց կողերուն ինք ալ վերածուեցաւ խոտի Եւ ամէն գարնան Գորովի կը կանաչի

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղ:
 Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62
 Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ. հեռ. (094) 53 44 64
 Խմբագրական խորհուրդ
 Գլխավոր խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլտրորադո Պրինտ» ՍՊԸ
 Տպագրված է «Ռուբիկ Դարիբյան» Ա/Չ տպագրատանը
 Տպաքանակը՝ 500
 Ծավալը՝ 1 տպագրական մանուկ